ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 տոլար թղթադրամ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարին. 20 Ֆրանք
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգինները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդութիւններ ալ կընդունուին, առանց ոեւէ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատան մէջ (rue Vacon, 50) ամէն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 47
1887 ՓԵՏՐՎԱՐ 2
(ՅՈՒՆՎԱՐ 21 Հ. Տ.)
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիծը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար ալ պէտք է դրկել խմբագրութեան հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Եգիպտոսէն (Գահիրէ). — Նամակ Թիւրքիայէն (Ափրիկեան Տրիպոլիս). —Հայեր յԵգիպտոս.—Հայ թագաւորների պատկերներն.—Ֆէյլետօն. — Արտասահմանի լուրեր.—Առեւտրական. — Ծանուցումներ:

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Գահիրէ, 3 Յունվար 1887

Ուր միութիւն, անդ յաղթութիւն.
Ուր յաղթութիւն, անդ ազատութիւն:

Հայեր երբ իւրեանց բաղձալի ազատութիւն չեն ստանար, արդեօք ո՞ւմ է յանցանքը. Տաճիկ կառավարութեա՞ն որուն արդէն բռնաւոր կանուանեմք, թէ Եւրոպայի տէրութեանց որոց շահախնդիրներ կ'կոչեմք։

Տիրող կառավարութիւն բնականաբար չի տար մեզ ազատութիւն, վասն զի իւր թագաւորութիւն մեզմով կանգուն մնացած և իւր հարստութիւն մեր քրտինքով դիզած է։ Եւրոպան ալ ի՞նչ պիտի ընէ երբ մենք մեր այն իրաւունք զոր ինք տուած է մեզ, ըստ արժանւոյն չեմք խնդրեր, դէթ գոհացնելու չափ զինք թէ խաբուած չէ մեզ ազգ մը ճանչնալով. և ի՞նչ կրնայ ալ ընել երբ մենք, առ ահի, գոհ ենք կ'ըսենք Սուլթանէն և մեր իրաւունք իսկ խնդրելու քաջութիւն անգամ ցոյց չեմք տար։

«Արմէնիա» լրագիր իւր գոյութեամբ մեզ հայոցս մէջ ի նորոյ կենդանացուց 61երորդ յօդուած. նա առաջին անգամ լինելով ձայն տուաւ օտարաց մէջ խառնուած Հայերուն ուշ խելքն եկան և խմբուեցան այս Նուիրական անուան տակ. ասպարէզ բաց եղաւ, շատ մարդիկ ճանչցան ուրիշ շատ մարդեր, շատ մը ընկերութիւններ կազմուեցան, շատ մը ճառեր և շատ մը յօդուածներ գրուեցան. և ա՛խ, այդ ճառերն և յօդուածներ գրողներէ շատեր մեր քաջերու վրէժխնդրութեան բոցերը իրենց հետ տանելով ազատեցին զիրենք. և ո՞վ գիտէ, հայրենասէրներէ ո՞վքեր թուած են դեռ այդ կերպով յաղթանակ տանելու համար, մինչդեռ մեր բախտակից ազգեր իւրեանց ազատութեան յաղթանակի կ'տօնեն, մինչդեռ Եւրոպան մեր վիճակի ճանաչելով յարմար ժամանակ կ'խոստանայ և մինչդեռ Տաճիկն ի սեւ այս ամենայնի, կ'հրճուի, կ'զօրանայ, կ'բռնանայ և կ'կեղծաւորի զի հայկական յեղափոխութեան խնդիր ծայրայեղութեան ընթացքին մէջ կ'նշմարէ դարձեալ, այնպէս որ այդ խնդրի համար տակաւին չորս հոգի և չորս անձ իրարու չուրջ բոլորած, իրարու միացած չեն միմեանց խօսքը հասկընալով. Ունենալով միայն մասնաւոր գործող անհատներ և մասնաւոր ընկերութիւններ պէտք չէ գոհանալ. անհատի մը ձայն անկարող է ազատուած արձագանք առաջ բերելու. և բաժանեալ ընկերք չեն կարող ազատուած արդիւնքը արտադրել. իւրեանց բաժանեալ զօրութեամբ և հրամանատարաց շատութեամբ կրնան ընկճիլ և ցրուիլ դոյզն հարուածի մ'առջև երբ նեցուկ չեն միմեանց։

Երբ նպատակնիս մէկ է, ինչո՞ւ պիտի ըլլամք անջատ իրարմէ և գուցէ գործերնիս ալ իրարու հակառակ. ինչո՞ւ համար չի պիտի միանամք մեծ զօրութիւն մը գոյացնելու և հայու ազատութեան միակ միջոց բազմիցս յեղյեղուած և մէկ միաձայն սպասած յեղափոխութիւնը գործադրելու։

Ըստ իմ կարծեաց, վարանելու ժամանակ չէ մնացած. շատ հրամանատարաց ալ պէտք չունիմք, միութեամբ և գործունէութեամբ պէտք է ունենամք մի կեդրոն որ բաւական զօրութիւն գոյացնելով իբրև թագաւոր հրամայէ և կարող լինի վրէժխնդիր ազներ իւր չուրջ բոլորել, մանուկներ պատժել տալ, թշնամին սարսափեցնել, ժողովուրդ զօրացնել, տկարացած սիրտերը արթընցնել որոնց արձագանք հայոց լեռներ պիտի թնդացնեն՝ քաղաքէ քաղաք յարմար ժամանակին համայն աշխարհի ծանուցանել, գերութեան շղթան խորտակել և այնպէս պանծալ թէ մենք Հայերս ալ կէս լուսաւորեալ ազգ մ'եմք։

Առ այս յոյսերնիս մեծ է, միայն եթէ Հայեր խելամտիլ ուզեն ինկատ առնելով իւրեանց դրացի քանի մը հազար Սարքիներն որոնց համար երկու մեծ պետութիւններ Հարաւէն և հիւսիսէն կ'մրցին միմեանց հետ ազատագրելու նրանք, իւրեանց քաջութեան համար և ոչ թէ լուսաւորութեան կամ արտաքին սին ցոյցերու համար որով մեր դիւցազնակոյտ կործանեալ կ'հզօրին պանծալ։

Եթէ մեր առժամանակեայ գործիչները իւրեանց ցրուեալ ուժեր միացնեն, անձնուէրներ լինին, պիտի կարենան հանուր Հայոց սրտեր յինքեանս գրաւել և պիտի բանան փառաց ճանապարհը կախաղանի առաջնորդողներուն առջև, և պատուոյ ասպարէզը՝ նահատակներուն որոց արիւն միմիայն պիտի ըլլայ հայու ազատութեան գին։ Ուր չիկայ միութիւն, անդ չիկայ յաղթութիւն. ուր չիկայ յաղթութիւն, անդ չիկայ և ազատութիւն։

Կեդրոնի մը հաստատութիւնն առաջարկող եղբայրս ձայնակցելով, կը յորդորեմ մեր հայրենասէրներն որ անգին ժամանակը չի կորսնցնեն զի եթէ անցնին օրեր, կ'անցնին իրենց հետ նաև տարիներ և գուցէ ամբողջ հայութիւն որ անդունդին յատակին ինկած գտնուելով, այլ ևս ինքնապաշտպանութեան պէտքը կ'զգայ. զի խոնարհութիւնն իւր չափն անցուց, քաղաքականութիւնն իւր բոլոր ձևերն սպառեց, ճառեր և առաջարկութիւնները չի կրցան ազդել բանաւորին և աւելցուցին ի զուր մեր ցոյցեր և ձևակերպութիւնները իւրեանց չափով արհամարհանաց տեղի տուին որուն վրէժ առնելն միայն կարող է լուծել։

Մեր այս առաջարկին հետ ունիմք նաև մի խորհուրդ միացնելիք ընկ. գործադիր ժողովին յանձնելու. որ եթէ ուզէ ընդունիլ, պիտի կրնայ ունենալ քիչ ժամանակուան մէջ պատկառելի գումար մը և ահեղ զօրութիւն մը 16 ամսէն գործելու պատրաստ՝ իւր տալիք տոկոսը 100էն 50 վերցնել։

ԳԻՒՂԱՑԻ ՄԸ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Ափրիկեան Տրիպոլիս, 7 յունվար 1887

Կաթ քաղաքը գրաւող Թուարիկները՝ նոյն քաղաքը բոլորովին կործանելէն վերջը ձգած գացած են։

Ֆիզանէն Կաթ ղրկուած 300ի չափ զօրքերը առ այժմ քաղաքը կը պահպանեն և Ֆիզանի կառավարիչը պաշտօնանկ լինելով իւր տեղը դրուած է Մանսուր փաշա արաբ շէյխը որ Տրիպոլիի հին վեհապետներու ցեղէն է։ Երէկ այստեղէն ուղղակի Կաթ երթալու համար ճամբայ ելաւ իւր հետ ունենալով պաշտօնեաներ ու 500ի չափ արաբ զօրքեր։

Թուարիկներու ցեղը Ափրիկէի միջօրէի վրայ և արևելքէն մինչև արևմուտք ցրուած կ'ապրին։ Գոյներնին սև, ընդհանրապէս նիհար ու ջղուտ են. բնակութեան յատուկ տեղ չ'ունին և չպիտի կրնան ունենալ. իրենց համար Սահրա անապատի ամէն կողմ բնակութիւն կարելի է։

Խօսած լեզունին ո՛չ արաբերէնի և ոչ ալ ուրիշ լեզուաց նմանութիւն ունի, իսկ արտասանութիւնը քիչ մը ռուսերէնին։

Ունին ամենալաւ և արագընթաց բարակ ու երկար ոտքով ուղտեր որոնք ժամը 50–60 հազարամէթր կերթան և օրերով կրնան արշաւել առանց յոգնութիւն զգալու։ Սոյն ցեղը սնանելու կողմանէ իրենց ուղտերէն աւելի ժուժկալ և համբերող են, այնպէս որ, երկար արշաւանաց միջոցին ճամբայ ելնելէ քանի մը ժամ առաջ իրենց գօտիները քակելով 5-10 օրուան ճաշերնին մէկ անգամ միայն կ'ուտեն և գօտիները կապելով ճամբայ կելնեն. իսկ նօթութիւն զգացած ժամանակնին, օրէ օր այդ կապերով աւելի կը սեղմեն իրենց ստամոքսը. մոռցայ ըսել թէ իրենց կերակուրը միայն գարիի ալիւրով ու ջուրով շաղախուած պարզ խմոր մը կը բաղկանայ (ականջը խօսի մեր բժիշկներուն)։

Ընդհանրապէս գործածած զէնքերնին երկար ու ծայրը թունաւոր նիւթեր պարունակող նիզակներ և վահաններ են. և այնքան քաջամարտիկ ու այն նիզակները գործածելու վարժ են որ 30-40 մէթր հեռաւորութեամբ նշանակուած կէտի մը վրայ կրնան նետել։ Նմանապէս են յոյժ քաջավարժ ուղտերու վրայ արշաւելու. (այս պատրուակաւ Անգղիացիք Սուտանի պատերազմի միջոցին շատ զօրքեր վարձուորեցին այն ուղտերու վրայ հեծնելու արհեստը ուսուցանելու համար, բայց մինչև այսօր ոչինչ կրցան ընել)։

Նմանապէս շատ կարեւոր է գիտնալ իրենց զարմանալի բժշկութեան ուսումը. անձամբ իսկ շատ անգամ ականատես եղած եմ։ Գործածած դեղերնին է կրակի մէջ տաքցած ու կարմրած երկաթ որով կայրեն առ հասարակ ամէն հիւանդութեանց հարկ համարուած կողմերը. օրինակի համար. փորի ցաւին և աղաքերքէն տանջուող կանանց՝ փորը, աչքին՝ բիբերը, գլխու ցաւին՝ ճակատը են.։ Բայց զարմանալին սա է թէ շատ անգամ կը պատահի որ հիւանդները 3—4 օրէն կատարելապէս բժշկուած են։

Գալով իրենց արծաթասիրութեան, ստակներու մէջ յարգ կ'ընծայեն միայն բօթերային (սպանիական հին դրամ է. ի վաղուց Սուտան այս դրամը միայն առևտուրի մէջ կը ճանչնան. արժէքը 4 Ֆր. 30 սնթիմ.). այս պատճառաւ իրենց ըրած մեծահարուստ կարաւանք կը փոխանակեն այս դրամով։

ԱՐԱՐ

ՀԱՅԵՐԸ ԵԳԻՊՏՈՍ

ԳԱՀԻՐԷՆ գրած են մեզ հետեւեալը։

«Հայրենասիրական նպատակով կազմուած «Յառաջդիմասէր» ընկերութիւնը որ կը գործէ ի Գահիրէ, փոքր ի շատէ գոհացուցիչ վիճակ ունեցած է քանի մը ժրաջան երիտասարդաց անխոնջ աշխատութեամբ։ Ժողովուրդը համակրանօք կը խրախուսէ զիրենք իրենց օգտակար ձեռնարկութեանց մէջ, թէ՛ բաժանորդ գրուելով որոց թիւ հասած է 80ի և թէ՛ նպաստելով արտաքոյ կարգի հասոյթներով որոց միակ աղբիւրն են առ այժմ երեկոյթները։

«Արդէն հրատարակուած էր «Արմենիա»ի մէջ «Կտանակ» ողբերգութեան ներկայացուած լինելը։ Դեկտեմբեր 30ին ալ դարձեալ Եօզպէքեան Թատրոնին մէջ, ի նպաստ «Յառաջդիմասէր» ընկերութեան ներկայացուեցաւ մեծանուն Թըլեանի գործերէն «Նոյն Տիրան» կամ Արշակ Երկրորդի Թագաւորութեան խաղը։ Ներկայացումը շատ շքեղ կերպով կատարուեցաւ ի ձեռն անձնուէր երիտասարդաց և մասնակցութեամբ անուանի Հայ դերասանուհի Տիկին Աքրանեանի որ ազգասիրաբար ընդունած էր մասնակցիլ յաջողցնելու և փայլեցնելու այդ երեկոյթ յօգուտ ընկերութեան և ի պարծանս անձնուէր երիտասարդաց որոց զոհողութիւնք Եգիպտոսի Հայոց փառքն եղած են օտար ազգաց առջև։ Այդ երեկոյթէ զուտ հասոյթ եղած կը կարծուի 40 գաղղիական ոսկւոյ չափ։»

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ

Ստացանք Ուսթըրէն (Ամերիկայի Միացեալ—Նահանգներ) Մեծ. Պ. Սարգիս Ռստիկեանէն լուսանկար մի պատկեր «Հայաստանի փառքը» խորագրով։ Պատկերը որ ունի 35 սանթիմեթր երկայնութիւն և 28 սանթիմեթր լայնութիւն, կը ներկայացնէ մեր ազգի նահապետներն և Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան և Ռուբինեան թագաւորներէ գլխաւորներն, որոց իւրաքանչիւրի տակ նշանակուած է իւր իշխանութեան ժամանակամիջոցն։ Մէջ տեղը դրուած է Տրդատ թագաւորի մկրտութիւնն Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ և սորա ներքև նկարուած են Ս. Էջմիածին վանքը և Հայոց թագաւորութեան կնիքը։

Պրն. Ռստիկեան փափաքելով տարածել Հայ գաղթականութիւններին մէջ «Հայաստանի փառքը» յիշեցեալ այդ պատկեր, յատկապէս լուսանկարել տուած է զայն և ծախու հանած։ Գինն է 60 սէնթ Ամերիկայի մէջ և 3 ֆրանք ուրիշ երկիրների համար։ Շատ գնողներին զեղչ ալ կընէ։ Ցանկացողներին կարող են ստանալ դիմելով հետևեալ հասցէին։

Mr. S. Rustigian, 75, Market str.
WORCESTER MASS.
(Etat-Unis-d'Amerique)

և կամ թէ «Արմենիա»ի խմբագրութեան միջոցաւ։

ՖԵԼԻԵՏՕՆ (1)

Տարին անցաւ.—Անցեալ 1886 թուի զամբիւղը.—Բնութեան խաղ.—Հայերը եւ եզուիտները.—Կիրակոսեանի տիպը.—Բաշինջաղեան.—Հայոց դպրոց.—«Մշակ» լրագիրը.—Գրականական կիրակոսեանները.—Թատրոն։

Տարին անցաւ։

Կարելի է ասել 1886 թիւը մտաւ «զամբիւղ»ը, ինչպէս ժամանակի այն խոր զամբիւղի մէջ, որտեղից այլ եւս ոչ ոքի համար վերադարձ չկայ....

Բայց ես կաշխատեմ, գոնէ յիշողութեանս մէջ, հանել այն խոր, անյատակ «զամբիւղ»ից, ժամանակի զամբիւղից՝ մի քանի իրողութիւններ, մի կարճ տեսութիւն անելով թէ ինչ ենք արել մենք հայերս, անցեալ 1886 թուի ընթացքում։

Ինչպէս շատ բան չենք արել։

Ամենատխրալի երևոյթը մեր ներքին կեանքի մէջ այն է եղել, որ մեր հոգևոր—ծխական «դպրոցներ»ը նորից բացվեցան։ Բազմաթիւ երիտասարդներ և օրիորդներ նորից գործ և պարապմունք գտան, ուսուցիչների և վարժուհիների պաշտօններ ստանալով։

Բայց և ուսումնարանների բացվելուն պէս խնդիրները և երկպառակութիւնները, որոնք հայոց կեանքի «աղ»ն են, նորից կենդանութիւն ստացան։ Փա՛ռք քեզ Աստուած....

Զարմանալի, անբացատրելի, հրաշալի երևոյթներ են պատահում շատ անգամ կեանքի մէջ....

Անցնում էք, օրինակ, Թիֆլիսի փողոցներից մինով և յանկարծ հանդիպում էք մի մարդու, դիցուք մի հայ կամ վրացի արհեստաւորի, որ դէմքով շատ նման է դիցուք, Լորդ Չերչիլլին (նայելով այս վերջինի ֆոտոգրաֆիական պատկերին) կամ սաստիկ նման է իշխան Բատտէնբերգին, կամ մեծ նմանութիւն ունի Ստամբուլօվի հետ.... Ես մի քանի տարի սրանից առաջ ճանաչում էի Թիֆլիսի ապարաններից մինում մի հայ «մուր—քաղ»ին, որ ոչ թէ միայն դէմքով նման էր Բիկօնսֆիլդին, բայց և իր մեծ մեծ դատողութիւններով, իր ինքնահաւանութեամբ, այդ տգէտ «մուր—քաղ»ը շատ էր ուզում նմանվել Բիկօնսֆիլդին, դժված լինելով քաղաքականութեան վրա, քաղաքական դատողութիւնների և քաղաքական հարցերի վճռելու վրա....

Մարդը, տեսնելով այդ տեսակ անբացատրելի երևոյթներ, բնութեան այդ տեսակ «խաղ», շուարած է մնում։ Մարդը ինքն իրան հարցնում է՝ հանգամանքների ի՞նչ տեսակ բերմունքով մի հայ, մի կովկասեցի բնակիչ, որ ոչինչ ազգակցական կապեր չունի անգլիացիների հետ, կարող է դէմքով և խելքով էլ նման լինել մի անգլիացու.... Բայց ինչքան էլ իր գլուխը փորի այս և այլ հարցերով, դարձեալ՝ չէ կարող ուրանալ, որ նըման է, շատ նման է....

Նոյն հարցը ես ինձ անդադար առաջարկում եմ երբ աւելի խոր կերպով հետազօտում եմ «հայի բնաւորութիւն»ը։ Եթէ լաւ, եթէ ուշադրութեամբ դիտէք հայի բնաւորութիւնը,—կը համոզվէք որ շատ անգամ հայը ամենաճարպիկ «եզուիտ» է.... Մարդը շուարած է մնում... Տէ՛ր Աստուած,—ո՞րտեղից կարող էր այդ տեսակ նմանութիւն ծագել։ Մենք ոչ ազգակցական կապեր ունենք ռոմանական ցեղերի հետ, ոչ էլ երբէք կաթօլիկ կրօն ենք դաւանել, ոչ էլ ունեցել ենք մեր մէջ Լօյօլայի զաւակների ներկայացուցիչներ, ոչ էլ ունեցել ենք «եզուիտներ»ի դպրոցներ, որոնց մէջ կրթվէինք լօյօլական, եզուիտական ոգով—բայց դարձեալ հայերից շատերը ջոկ ջոկ վերցրած՝ կատարեալ եզուիտներ են.... Որտեղից է մտել, խոր արմատներ է գցել հայերի մէջ այդ բնաւորութիւնը....

Այ քեզ «բնութեան խաղ»։

Բաշինջաղեան բաց է անում իր պատկերների ցուցահանդէսը։ Հայը հիանում է։

—Դա մեր ազգի համար պարծանք է այդպիսի մի նկարիչ ունենալ, պէտք է պաշտպանենք, պահպանենք մեր նկարչին, կրկնում է անդադար հայ-ազգասէրը....

Ահա Բաշինջաղեան սկսում է ծախել իր պատկերները։ Առնում են կամ ռուսները, կամ օտարազգիները, հայերից ոչ մին։

Հանդիպում եմ փողոցում պ. Կիրակոսեանին։

—Պարոն, չէ որ դուք ուզում էիք Բաշինջաղեանի «Նոր գետի հովիտը» առնել, ինչի՞ չառաք, իսկ այժմ մի ռուս պարոն արդէն առել է այդ պատկերը....

—Վա՛յ, վա՛յ, ինչ էք ասում, եղբայր, մի՞թէ արդէն ծախված է այդ պատկերը, ափսո՛ս, ափսո՛ս։ Բա՛, տունդ չը քանդվի, ու՞ր էիր որ ինձ չասայիր թէ մեր նկարիչը իր պատկերները ծախու է դրել, ես անպատճառ կառնէի այն պատկերը.... վա՛յ, վա՛յ.... կեղծաւորում է եզուիտ Կիրակոսեան։

Մ. գիւղի, կամ Ա. քաղաքի հայոց դպրոցը այս կամ այն պատճառով փակվել է։

Հանդիպում էք Կիրակոսեանին, Պետրոսեանին, Գէորգեանին, Մարտիրոսեանին.... և հարիւր ու մի ուրիշ հայ պատուական պարոններին։

—Վա՛յ, վա՛յ, ի՞նչ անենք, ջուրն եկել է ու մեզ տարել։ Մեր անպիտան հոգաբարձուք իրանց երկպառակութիւնների շնորհիւ երեսի վրա են թողել մեր դպրոցը, և այժմ ահա նա փակված է.... Մեր ազգերի խելքին ինչ ասեմ, մեր հայերի խելքին ի՞նչ անուն տամ... Բաս ո՞րտեղ պէտք է հիմա ուսում առնեն մեր մանուկները....

Մի քանի ժամանակից յետոյ յիշեալ գիւղի կամ քաղաքի դպրոցը կրկին բացվում է։ Եւ ի՞նչ էք կարծում... Մի քանի ժամանակ առաջ կոկորդիլի արտասուքներ թափող այդ պատուական Կիրակոսեաններից, Մարտիրոսեաններից, Գէորգեաններից ու Պետրոսեաններից ոչ մին մօտն էլ չէ գնում....

—Ի՞նչ դպրոց, ի՞նչ՝ փլաւ, ի՞նչ փաստան.... Դպրոցի գլուխ ո՞ւնի մարդը, երբ առուտուրը այդքան վատ է գնում։ Գլուխը քարը,—ինչ որ ուզենան թող անեն, ես, աղբեր, այդ ուսումնարանների բանի մէջ չեմ խառնվում, գլուխ չունեմ...

«Մշակը» տասն և երեք տարի հրատարակվելուց յետոյ մի տարով դադարում է, ընդմիջում է իր գոյութիւնը։

Պ. Կիրակոսեան, կամ որ և է մի հայ Լօյօլան գիշեր ցերեկ ախ ու վախ է քաշում... «Գազետ չունենք, բան չունենք կարդալու, ա՛յ «Մշակը», իսկ որ գալիս էր, դրա պէս թերթ չենք ունենայ.... Օտարների առջև էլ նրանով պարծենում էինք....Ա՛խ, եթէ նորից գալու գայ, ես Կիրակոսեան չեմ լինի, եթէ «Մշակի» համար ես մենակ մի 500 բաժանորդ չը գտնեմ, աղաղակում է բազարի մէջ Կիրակոսեան։

—Բոլորս էլ նոյնը կանենք, կրկնում են միաբերան միւս եզուիտ Կիրակոսեանները։

Եւ ահա «Մշակը» սկսում է նորից լոյս տեսնել։ Հէնց որ լուրը տարածվում է որ «Մշակի» առաջին համարը հրատարակվեցաւ, մեր բոլոր Կիրակոսեանները, այդ մեծ մեծ խօսող եզուիտները «տաղ» արին։ Նըրանք թաք կացան քաղաքի քունջ ու պուճախներում, որպէս զի մարդկերանց չը հանդիպեն, որոնք կարող էին նրանց յիշեցնել իրանց արած մեծ մեծ խոստումները «Մշակի» ընդմիջման ժամանակ։

Խմբագրական զամբիւղի մէջ կը գտնէք և այսպիսի բազմաթիւ նամակներ։

«Մեծապատիւ խմբագիր.»

«Ձեր լրագիրը մեր քաղաքում մեծ ուրախութեամբ կարդացվում է. մեզ համար «Մշակը» մի դպրոց է դարձել, որի ազդեցութեան տակ բոլորս կրթվել ենք և կրթվում ենք։ Մանաւանդ շատ լաւ են առաջնորդողները և «Շվէյցարիայի» յիշողութիւնները։ «Մշակը» իսկ լրագիր է, որ կարելի է կարդալ։

«Ահա ուղարկում եմ ձեզ և մի յօգուած, որ խնդրում եմ պատիւ անել ինձ, զետեղելու ձեր պատուական թերթի մէջ»։

---

(1) «Մշակ»ի ներկայ տարու առաջին թուին մէջ հրատարակուած «Ֆելիետօն»ի մէկ մասը կարտատպենք «Արմենիա»ի մէջ, որովհետև բացի իւր սահուն, հետաքրքրաշարժ և ծաղրաշարժ ոճէ որ ֆելիետօնիստին յատուկ է, կը պարունակէ այնպիսի ճշմարտութիւններ որ աւելորդ չինէր կարդացունել նաև Եւրոպաբնակ հայերին։ Մեր մէջ ալ այժմ խօսքով ազգասէրներ և հայրենասէրներ սկսած են շատնալ, որոնք առանց գործի իրենց լոկ խօսքերով կուզեն ազգասէր երևիլ. բայց երբ կարգը գործի գայ, կը տեսնուի որ իրենց ունեցածն է միայն մեծախօսութիւն, եսական ոգի և կեղծաւոր սէր Հայաստանի վրայ։ ԽՄԲ.

«Ձեզ ցմահ հաւատարիմ և ձեր գործունէութիւնը պաշտող»

«Կիրակոս Կիրակոսեան»

Խմբագրութիւնը նայում է յօդուածը, տեսնում է թէ թոյլ բան է, գուցէ և անգրագէտ է գրուած և չէ տպում։

Եւ ահա պ. Կիրակոսեան այնուհետև մի անգամից հանում է իր եղբայրական դիմակը. Նա այն օրից դառնում է «Մշակի» անհաշտ թշնամի, որովհետև նրա անգրագէտ յօդուածը չը տպեցաւ։

Նա այնուհետև կամ հակառակ բանակն է անցնում, կամ կեղծանուն, եղբայրական նամակներ է սկսում գրել «Մշակի» խմբագրութեանը հետևեալ բովանդակութեամբ։

«Պ. Խմբագիր.»

«Այս տարի հազիւ թէ բաժանորդներ կունենաք մեր քաղաքում, որովհետև ձեր յօդուածները թեև լաւ են, բայց այնքան ուրախութեամբ չեն կարդացվում, ինչքան կը կարդացվէին այն բովանդակութեան յօդուածներ, որոնցից մի քանիսներ ես փորձեցի ձեզ գրել, բայց դուք չը բարեհաճեցիք տպագրել։ Եթէ իմ յօդուածները տպագրէիք, կարող էիք վստահ լինել, որ այս տարի մեր քաղաքից մօտ հազար բաժանորդ կունենայիք. ուրեմն «Մշակը» կարող էիք և ամենօրեայ դարձնել։ Ցաւալի է որ ինքներդ չէք հասկանում ձեր օգուտը և իմ յօդուածները մերժեցիք, նրանցից մէկը միայն տպելով, այն էլ լուրի ձևով»։

«Հաւատացէք որ ես «Մշակի» բարեկամ լինելով համարձակվում եմ ձեզ խորհուրդ տալ նոյն իսկ ձեր օգտի համար։ Ես «Մշակին» աջողութիւն ցանկանալով զրկեցի իմ ժամանակս և գրեցի յօդուածներ, հաւատացած լինելով որ միայն այդ տեսակ յօդուածներով «Մշակը» կարող է առաջ գնալ։ Եթէ իմ յօդուածների պէս յօդուածներ տպելու չէք, դուք ձեր «Մշակի» հետ միասին կորչելու էք, պ. Արծրունի»։

«Ընդունեցէք յարգանքս»։

Կիրակոսեան

—

Մի քանի տարի շարունակ հայոց թատրոն չը կար Թիֆլիսում։ Պէտք է տեսնէիք՝ թէ ինչ ախ ու վախ էին քաշում թիֆլիսցիները։

«Ա՜խ, եավնի բան՝ կուլի, ասում էր թիֆլիսցի հայ-եղբայր պ. Կիրակոսեան, հայ լինենք ու հաւոց թէատր չունենանք. Թիֆլիսի պէս մի մեծ քաղաք հաւոց թէատր չունենայ.... Ա՜խ, ե՞րբ կուլի որ հայեվար պատուական լեզուն էլի լսիմ. մեր կարօտ ենք մնացի հաւոց թէատրի....

Վերջապէս, հայոց թատրոնը դարձեալ վերականգնվում է, ներկայացումները սկսվում են.... Թատրոնը դատարկ է....

Հանդիպում եմ պ. Կիրակոսեանին։

—Երէկ հաւոց թէատրում էլի՞ր խո։

—Այո՛, եղել եմ, պատասխանում եմ ես, բայց թատրոնում հազիւ 20 հոգի կար....

—Ա՜խ, մեր հայք, մեր հայք, բացականչում է սրտացաւ պ. Կիրակոսեան, ախար ասած է որ հայը իր ձեռքովը է իր տունը քանդում....

Ես էլ զգացվում եմ. քիչ է մնում գրպանիցս հանեմ մի թաշկինակ որ ընծայեմ նրան, եղբայր-հայ-թիֆլիսցի-Կիրակոսեանին, նրա կրօկոդիլեան արտասուքները սրբելու համար....

Շարունակում եմ փողոցով գնալ։

Դարձեալ հանդիպում եմ մի այլ Կիրակոսեանին։

—Երէկ եղե՞լ էք հայոց թատրոնում։

—Այո՛.

—Ինչպէ՞ս էր.

—Կատարելապէս դատարկ։

—Ահա այդպէս են հայերը, սկսում է քարոզ տալ Կիրակոսեան։ Երբ հայոց թատրոն չը կար, լաց էին լինում, իսկ այժմ երբ գոյութիւն ունի,—ոչ ոք չէ գնում.... Այդպէս են մեր հայերը....

Ինձ ու ինձ մտածում եմ. եթէ մի օրվայ ընթացքում ինձ հանդիպած ախ ու վախ քաշողների, հայերին նախատողների, «ախ մեր հայք, մեր հայք, ձեր տունը չը քանդվի, ձեր խելքին ինչ ասեմ» ասողների կէսը, քառորդն անգամ յաճախէր թատրոնը,—հայոց թատրոնը միշտ լի կը լինէր հանդիսականներով....

Որտեղ նայես,—ամեն տեղ «եղբայրներ»....

Այդ ինչպէս է եղել, որ մի ազգ, որ երբէք եղբայրական դպրոցներ չէ ունեցել, այնպէս լաւ կրթվել է եղբայրական ոգով....

Երևում է որ այդ յատկութիւնը մեր մէջ բնածին է.....

ԱՍԻԱՑԻ
(Մշակ)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Բուլղարիայի Խնամակալներն, կ'ըսէ մի անգլիական լրագիր, պիտի առաջարկեն Կ. Պոլսի դեսպաններին իրենց ծրագիր Բուլղարիայի գործեր կարգադրելու հետևեալ կերպով։

1ն. Բոլոր մեծ պետութիւններ մի ընտրելի անուանեն Բուլղարիայի Գահին համար։ 2րդ. Մեծ պետութիւններ ընդունին Բուլղարիայի և Արևելեան Ռումելիի միութիւնը։ 3րդ. Խնամակալները հրաժարին այս ծրագրի առաջին յօդուածի գործադրումէն յետոյ։ 4րդ. Տասնվեց անդամէ մի նախարարութիւն կազմուի որ մեծ պետութիւններէ բացարձակապէս ճանչցած առժամանակեայ մի կառավարութիւն լինի. առաջին նախարարը մեծ պետութիւններէն նշանակուի և լինի պետ առժամանակեայ կառավարութեան. Նախարարութիւնը ունենայ երկու Զանքովեան անդամ, բայց պաշտօնների բաշխումը առաջին Նախարարը կատարէ։ 5րդ. Անմիջապէս ժողովի հրաւիրուի ազգի մեծ Սօպրանիէն մէկ իշխան ընտրելու համար կամ լուծուի ազգի ժողովը և մի Նոր Սօպրանիէ կազմուի երեսուն օրի պայմանաժամին մէջ։ 6րդ. Արևելեան Ռումելիի երեսփոխաններն մասնակցին իշխանի ընտրութեան։

—Վիեննայի, Պէրլինի և Պետերբուրգի կառավարութիւններ իրենց Կ. Պոլսի դեսպաններին համեմատ հրահանգներ տուած են պուլկարական գործերի վիճաբանութեան համար. յանձնարարած են նոյն աջակցել Թիւրքիոյին Բուլղարական խնդիրը կարգադրելու համար։

—Գերմանական բանակին նոր տեսակ բազմահարուածեան հրացաններով զինուելուն առթիւ փորձեր կատարելու համար պահեստի զօրքերէն 72,000 անձ զէնքի տակ կանչուեցան։ Այս դէպք անգլիական լրագիրներ իրենց սովորութեան համեմատ դէշ կը մեկնեն. բայց Պէրլինէն եկած հեռագիրներ կը յայտնեն թէ այս բան պատերազմի երկիւղներին հետ բնաւ կապ չունի և զէնքի տակ կոչուողները 12օրէ յետոյ պիտի արձակուին։

—Սօֆիայէն կը գրեն անգլիական Բէլ Մէլ Կազէթ լրագրին թէ Ալէքսանդր իշխանի տապալման մէջ մաս ունեցող պուլկար սպայներ պատուի դատ պիտի բանան Լորտ Սալըզպըրիի դէմ որ իւր Նոյեմբեր 9ի բանախօսութեան մէջ օգոստոս 2ի դէպքերին ակնարկելով ասեր է. «Մի մեծ աղէտ պատահած է. զինուորական մի դաւադրութիւն, որին չգիտեմ ինչ անուն տալ. սպայներ որոց վրայ Բուլկարիոյ իշխանը ճարտար և քաջ իշխանն վստահութիւն ունէր, օտարի դրամով գնուած, կը դառնան իշխանի դէմ որ զիրենք յաղթութեան առաջնորդած էր և գահազուրկ կ'անեն զինք։»

—Աւստրիա իւր զինուորական պատրաստութիւններ արագութեամբ առաջ կը տանի։ Կ'ըսուի թէ Ռուսիա և Աւստրիա հակառակ իրենց պաշտօնապէս ըրած բարեկամական յայտարարութիւններին, էական մի կէտի վրայ այնքան հեռի են համաձայնելէ, որքան էին նոյեմբեր ամսի մէջ, և թէ նոյն անհամաձայնութիւն կը տիրէ Ռուսիայի և խնդրէն շահ ունեցող միւս պետութիւններին մէջ։ «Բէշտէր Լօյտ» լրագիրը կ'ըսէ թէ Ֆրանսայի կացութիւնը Գերմանիայի նկատմամբ, Աւստրիայի կացութիւնը Ռուսիայի նկատմամբ, մէկ միւսի հետևանքն են և եթէ մի չփոթութիւն ծագի առաջին երկուքին մէջ, միւս երկուքն ալ անխուսափելի կերպով կռուի մէջ պիտի մտնեն։ Այս պատճառաւ է որ պատերազմական պատրաստութիւններ արագութեամբ առաջ կը մղուին։

—Վիեննայէն յունվար 31ին կը հեռագրեն որ Պ. Քալնօքի աւստրո-հունգարական երեսփոխանական ժողովի մէջ յայտարարած է թէ բնաւ փոփոխութիւն եղած չէ Աւստրո-Հունգարիայի և օտար պետութիւնների, ի մասնաւորի Գերմանիայի յարաբերութիւններին մէջ։ Նախարարն աւելցուցած է թէ կը յուսայ որ խաղաղութեան պահպանումը կարելի պիտի լինի, երկրի շահերը պաշտպանելով հանդերձ։ Իւր կարգին՝ Պ. Թիցա, Հունգարական խորհրդարանի նախագահը՝ զինուորական պատրաստութիւններին վրայ խօսելով ասեր է որ ամենուրեք կը փափաքին պահպանել խաղաղութիւնը և չկայ երկիր որ ցանկայ պաշտպանել իւր շահեր իւր յատուկ ոյժերով. պատերազմի համար չէ որ պատրաստութիւն կը տեսնուի, այլ զգուշութեան համար է միայն։ Պէտք է, ասեր է Պ. Թիցա վերջացնելով, հաշուի առնել որ եթէ բոլոր տէրութիւնների պատրաստութիւններին համար խաղաղութիւնը վրդովուի մեր յոյսին հակառակ և եթէ խաղաղութիւնը պահպանելու համար ամեն ջանքերէ վերջ միայն մի կերպով կարելի լինի պաշտպանել մեր շահեր, մենք պիտի կրնանք զմենք պաշտպանել այն կերպով և։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՎԱՐ 25էՆ ՓԵՏՐՎԱՐ 2

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ. Գիներու վրայ փոփոխութիւն մը չըլլալով բուտկայէն ՝գործեր կըլլան, շարժուած վաճառումները ամեն տեսակէ 1900 հակի չափ է, որցմէ կը նշանակեմք՝ 150 հակ ընքարէ սևերը 67½-75 ֆր. 800 հակ Խորասան սպիտակները 147-150 ֆր. 200 հակ երկրորդ կարգ Կիւրճիւ 135-140 ֆր. 100 քիլօն։

ԲԱՄԲԱԿ. Պատահական գործեր միայն ըլլալով ընդհանրապէս հրապարակը թոյլ է։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Պատերազմի երկիւղները հրապարակին ազդեցութիւն ընելով առնողները ձեռնպահ կը մնան, այսու ամենայնիւ գներու վրայ կարևոր անկում մը չը կայ։

ԿԱՆԵՓ. Ըստ տեսակին 55էն 64 ֆր. 100 քիլօն։

ՑՈՐԵՆ. Պահանջը նուազած է, գինը 15էն 20 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). 11½-13½ ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). Ապրանքի չգոյութենէն կը պնդուի, 12½-12¾ ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Միշտ թոյլ է, Ռումանիոյ ապրանքները 15-16½ և Տրապիզոնի մաքրուած տեսակները 21½-22½ ֆր. 100 քիլօն։

ԹՌՉՆԱԿԵՐ (alpiste). Մաս մը գործեր եղած են 27-27½ ֆր. 100 ք. Ռոտոսթոյի ապրանքներէ։

ՇՈՒՇՄԱ (sésames). Գները անփոփոխ են և հրապարակը մեծ գործունէութիւն ցոյց չը տար։

ԽԱՇԽԱՇ (pavots). 26-26½ ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՏ. Շատ թոյլ կերթայ, 24-25 ֆր. ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Չը կոտրածը 37 և կոտրածը 92-93 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՏ. Գործ չըլլար, անատոլական գին 120-145 ֆր. 100 քիլօն։

ԱՅԾԻ ՄՈՐԹ. Ըստ տեսակին 22էն 35 ֆր. տուզինան։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ՇԱՔԱՐ. Պատրաստ 43½ և ապայմանելի 42½ ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. Գները միշտ հաստատ կը բռնուին, 79-88 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. 3, 20-3, 30 ճերմակները 3, 50-4 ֆր. սևերը։

ՊՂՊԵՂ. Ըստ տեսակին 88էն 100 ֆր. 50 քիլօն։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱՅԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրք. հրատրկչ. ընկերբ.»

Մեծանուն բանաստեղծ Դամառ-Քաթիպայի (Ռ. Պատկանեանց) ստանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Դամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններէ մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, աւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմէնիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքով հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԽՈՐԱՑԵԼԻ » 40 »

Կը ծախուին Մարսէյլ, «Արմէնիա» լրագրի խմբագրատունը :

Օտար քաղաքացիներին կը ղրկուի փոստով, երբ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրիտանական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմէնիա»ի խմբագրութեան :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԳԷՈՐԳԱՅ ԱԲՈՎԵԱՆՑ
Երրորդ տպագրութիւն

Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ի՛նչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրեր, ո՛րոնք են եղած իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառներ և այլն։

Գէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան Վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր երբ աշակերտներ իրեն կը սպասէին Վարժարանին մէջ իւր սովորիչ դասեր լսել, իմացուեցաւ թէ անյայտացեր է, իւր աւանդած դասերի համառօտութիւնը գրքի վրայ ամփոփած և թողած էր։ Այս տխուր դէպք պատահած է 20 տարու չափ առաջ։ Իւր եղբայր ի զուր ընդերկար նորա հետք զանազան քաղաքների մէջ փնտռելէ յետոյ, թէ՛ իւր անյայտացեալ եղբօր յիշատակը յաւերժացնելու և թէ՛ Հայոց պատմութիւնը ուսանիլ փափաքողներին մի դիւրութիւն ընծայած լինելու համար հրատարակած է նորա գրած այն «Համառօտութիւն Հայոց Ազգի պատմութեան»ը, որ մինչև այժմ երրորդ տպագրութեան արժանացած է։ Սկիզբը դրուած են Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ և պատմութիւնն ալ օժանդակ գրուած է որ թագաւորների կռիւները միայն չներկայացունէր, այլ և կը պատկերացունէ ժողովրդի վիճակը։ Մանաւանդ Կիլիկիոյ մէջ մեր թագաւորութիւն ունեցած ժամանակ Լատինների դաշնակցութեան վրայ յոյս դնելով մեր կրած աղէտները և յուսախաբութեան արդիւնքը ուշադրութեան արժանի ոճով ցոյց տրուած են։

Փափաքելի է որ ամեն Հայ իւր տան մէջ ունենայ գէթ մէկ օրինակ իւր ազգային պատմութեան գիրքէն. կարդայ և կարդացունէ իւր տան մէջ գտնուողներին։

Գ. Աբովեանցի «Հայոց պատմութեան» սոյն դասագիրքը կարելի է ստանալ «Արմէնիա»ի խմբագրատունէն, ղրկելով միայն 2 ֆրանգ մէկ օրինակի համար։ Խմբագրատունը ինք կը վճարէ փոստի ծախքը։ Մէկ անգամէն 10էն աւելի օրինակ գնողին զեղչ կը լինի։ Վճարքը չղրկուած գիրք չղրկուիր։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(Արամեան)

1887 տարւոյն Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէ շատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական կարևոր գիտելիքներն. Օսմանեան կայսրութիւն, — Աւագանի կայսերական պալատան, — Նախարարք Բ. Դրան, — Մեծ պաշտօնատարք Մայրաքաղաքիս, — Հրամանատարք բանակաց, — Կուսակալք նահանգաց, — Պատրիարքունք և ազգապետք, — Օսմանեան դեսպանք, — Դեսպանք օտար տէրութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Օսմ. տէրութեան, — «Հայրապետութիւն Հայոց», — Եպիսկոպոսունք, — Ազգ. Կեդրոնական Վարչութիւն, — Յանձնաժողովք, — Պաշտօնեայք Պատրիարքարանի, — Առաջնորդութիւնք Թուրքիոյ, Թեմք նոցա և տունք, — Հովուութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, — Թաղօրայք Կ. Պոլսոյ, — Համագումար թաղօրէից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, — Առաջնորդութիւնք ի Ռուսաստան և այլն, — Մայրավանք ի Ռուսաստան և այլն, — Կայսերական գերդաստան Ռուսիոյ, — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլևայլ տէրութեանց, — Հռովմէական Հայ հասարակութիւն, — Բողոքական Հայ հասարակութիւն, — Դասատուք պետական ուսումնարանի, — Բժիշկք քաղաքական և զինուորական, — Փաստաբանք, — Արուեստապետք, — Լրագիրք, — Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային, — Եւրոպական միջազգային թղթատարութիւնք, — Եւրոպական նամակատունք, — Ցամաքային թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ, — Ժամացոյց սուրհանդակաց Օսմ. միջազգային թղթատարութեան, — Ցուցակք երթևեկութեանց շոգենաւուց այլևայլ ընկերութեանց, — Պատկեր 1887 թուին, — Վիճակագրութիւնք օտար տէրութեանց, — Ազդք, — Ծանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմէնիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ։ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Պարզ ՕՐԱՑՈՅՑը որի մէջ կայ Վեհ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը ղրկուի փոստով 30 սանթիմի փոխարէն։

GUIDE MARITIME

Վաճառականներին և ճանապարհորդներին համար անհրաժեշտ մի շաբաթաթերթ է այս որ կը հրատարակուի Պ. Շիքլէրի տնօրէնութեան տակ և Ֆրանսայի բոլոր նաւահանգիստներէն աշխարհի ամեն կողմեր գնացող շոգենաւների մեկնելու օրերն կը ծանուցանէ պաշտօնապէս, վաճառականական լուրեր և դատավարութիւններ կը հաղորդէ և այլն։

Բաժանորդագրութեան տեղն է Rue Vacon, 50, Marseille և տարեկան բաժանորդագինն է 12 Ֆրանգ Մարսէյլի համար և 15 Ֆրանգ օտար քաղաքների համար։

ՐԱՖՖԻԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա.

Ազգային վիպագիր Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւէն ԿԱՅԾԵՐը։ Այս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քրդերի զանազան ցեղերի և Հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետևին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տան։

⁂

ՋԱԼԱԼԷԴԴԻՆ

1877ի ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ Շէյխ Ջալալէդդինի արշաւանքին պատճառաւ Տաճկաստանի Հայերի կրած աղէտների մէկ ազեխարշ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Րաֆֆիի պատկերը։

⁂

Վերոյիշեալ երկու գիրքեր կը ծախուին «Արմէնիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար փոստի ծախքով հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

Ա. Հ. ԿՐԻԴ ԵՒ ԸՆԿ.

Գաւնըբօր Ն. Ռ. Բ. Անգլ. Հնդկաստան

Ներածող և արտածող վաճառական, յանձնակատար, աճրդախօսութեան յանձնակատար, մեծ քանակութեամբ ապրանքների պայմանագիր (քօնթրաթճի) և ամեն տեսակ կաշիի գործարանատէր։

Վերոյիշեալ զանազան ճիւղերին մէջ երկար ժամանակեայ փորձառութիւն ունենալով, պատրաստ ենք յանձնարարութեամբ ընդունել վաճառքներ, պայմանաւոր վաճառման կամ հրապարակային աճուրդի համար, այնպիսի պայմաններով որ փոխադարձաբար շահաբեր և գոհացուցիչ լինին։

Եւրոպական վաճառքների փոխանակութեամբ մենք կրնանք ղրկել ինչ քանակութեամբ ալ որ ուզուին, Հնդկաստանի մէջ գործածուած ապրանքներ, առաջին կարգի ընտիր տեսակներէ, ինչպէս

Լիւքնօսյի մանկական խաղալիկներ, Պէնարէսի արոյր և ոսկեճամուկ չուխա, Մօրատապատի արոյրեայ անօթներ, Տէլհիի ոսկեայ և արծաթեայ գոհարեղէններ, Գաշմիրի շալեր, կերպասներ, ևն.։

Ընդարձակ տեղեր ունենալով յանձնարարուած ապրանքներ ցոյց դնելու և ծախելու համար, մենք կարող ենք ամենայն վստահութեամբ յանձնարարել մեր տունը ամեն անոնց որ կուզեն գործով յարաբերութեան մտնել մեզ հետ և մենք շատ ուրախ պիտի լինինք եթէ տեղեկութիւններ և օրինակներ ընդունինք այս նպատակով։

Մեր տան մասին տեղեկութիւն ստանալ ուզողներն կարող են դիմել հետևեալ դրամատուններին։

BANK OF BENGAL
ROHILCUND ET KUMAON BANK
AGRA BANK LIMITED

Եթէ պէտք լինի, պատրաստ ենք ուրիշ տեղեր ալ ցոյց տալ տեղեկութիւններու (références) համար։

Ամէն բան մեզ հաղորդելու համար պէտք է ուղղակի գրել մեզ անգղիերէն լեզուով և մանրամասնօրէն, առաջարկուած գործին վերաբերեալ պայմաններն և դաշինքն ներկայացնելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER
rue Vacon 50.